

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՐԻՆԵ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

**ՆԵՐԻՄԱՍՏԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ
(անգլերեն նյութի հիման վրա)**

**Ժ.02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ե.Լ. Երզնկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, դոցենտ Շ.Հ. Պարոնյան
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ս.Ա. Չալարյան

Առաջատար
կազմակերպություն՝


Երևանի Վ. Բրյուսովի անվան
պետական լեզվաբանական
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014թ. ապրիլի 23-ին, ժամը 11:00-ին ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2014 թ. մարտի 21-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
բ.գ.դ., պրոֆեսոր՝



Ե.Երզնկյան

Երկխոսությունը որպես հաղորդակցման ձև՝ կառուցվածքային և իմաստային մակարդակներում արտացոլում է խոսակիցների խոսքաստեղծման հնարավորություններն ու լեզվօգտագործման մասին ունեցած պատկերացումները: Այն դիսկուրսի տեսակ է, որի հիմքում ընկած է հաջորդական խոսքափոխանակման արդյունքում կառուցվող կապակցված և իմաստակիր խոսքը: Խոսքային կաղապարների մշակումն ու կատարելագործումը հասարակության լայն զանգվածների համար ուղի են հարթում քաղաքակրթության նորանոր արժեքներ ձեռք բերելու համար:

Գոչված լինելով իրականացնելու խոստովի հաղորդակցական մտադրությունները՝ խոսքը, իմաստային մակարդակում արտահայտում է խոսակիցների սուբյեկտիվ աշխարհընկալումն ու մտածելակերպը: Այն բացահայտում է անձի բուն էությունն ու արտաքուստ տեսանելի և ոչ տեսանելի մտորումները: Գուցե դա է պատճառը, որ մեր օրերում բավականին ընդգրկուն ուսումնասիրությունների են ենթարկվում խոսքի իմաստի «բացահայտ և ոչ բացահայտ կողմերը», որոնք ժամանակակից լեզվաբանության մեջ հայտնի են որպես խոսքի *արտակա և ներակա* իմաստներ:

Սույն աշխատանքում ***ուսումնասիրության առարկան*** ներիմաստի դրսևորման առանձնահատկություններն են երկխոսության մեջ, որոնք արտահայտվում են արտակա և ներակա կառույցներում ոչ բացահայտ կերպով տեղեկատվություն հաղորդելու միջոցով: Խոսքարտաբերման հիմքում ընկած են խոստովի հաղորդակցական նպատակները, ուստի խոսքի իմաստավորումը պայմանավորված է խոստովի սուբյեկտիվ մտածողությամբ: Յուրաքանչյուր խոսքում սուբյեկտիվ մտածողության գործոնի առկայության փաստը հաշվի առնելով՝ խոսակիցը հիմնվում է այն լեզվական և արտալեզվական միջոցների վրա, որոնք թույլ են տալիս ճանաչել խոսքի իրական իմաստը: Ուսումնասիրության ***օբյեկտն*** այն լեզվակառուցվածքային ձևերն են, որոնք բնորոշ են հատկապես երկխոսությանը և որտեղ ներիմաստը կարող է դրսևորվել տարբեր եղանակներով:

Աշխատանքի ***արդիականությունը*** պայմանավորված է միջանձնյա հաղորդակցման ընթացքում խոսակիցների խոսքային մտադրությունների իրականացման միջոցների քննության, ինչպես նաև բացահայտ և ոչ բացահայտ միջոցներով տեղեկատվության հաղորդման և ձեռք բերման ձևերի դիտարկման անհրաժեշտությամբ: Պայմանավորված լինելով խոսակիցների հարաբերություններով՝ խոսքի ամբողջական ընկալումը թույլ է տալիս երկխոսության մասնակիցներին ամբողջացնել այն իմաստները, որոնք իրականում առկա են խոսքում:

Աշխատանքի **նպատակն** է դիտարկել երկխոսության մեջ ներիմաստի դրսևորման եղանակներով պայմանավորված իմաստի արտահայտման և ընկալման առանձնահատկությունները՝ ըստ խոսքում ներիմաստի առաջացման նախադրյալների և արտահայտման պատճառների: Ընդ որում, էլակետային է համարվում այն դրույթը, որ տեղեկատվության հաղորդման և ձեռք բերման համար խոսքի արտահայտչաձևերի հիմքում ընկած են երկխոսության մասնակիցների հարաբերությունները ու խոսքի սուբյեկտիվության գործոնը:

Սույն նպատակի իրագործման համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

- դիտարկել երկխոսությունը որպես մասնակիցների կողմից կառավարելի հաղորդակցման ձև,
- պարզաբանել ներակա և արտակա իմաստների պատճառահետևանքային փոխկապակցվածությունը երկխոսության կառավարման գործընթացում,
- որոշարկել ներիմաստի ընկալման և մեկնաբանության փուլերը գիտակցական վերլուծության տեսանկյունից,
- լուսաբանել ներիմաստի տեսակները և դրանց արտահայտչաձևերը դիտավորության և ոչ դիտավորության տեսանկյունից երկխոսական համատեքստի շրջանակներում,
- վեր հանել կանխամտածված և ոչ կանխամտածված ներիմաստների արտահայտման պատճառներն ու առաջացման նախադրյալները,
- դիտարկել կանխամտածված և ոչ կանխամտածված ներիմաստների արտահայտման համար գործածվող լեզվակառուցվածքային ձևերը,
- որոշարկել կանխամտածված և ոչ կանխամտածված ներիմաստի մեկնաբանության համար անհրաժեշտ լեզվական և արտալեզվական միջոցները:

Նշված խնդիրների լուծման նպատակով աշխատանքում ուսումնասիրությունները կատարվել են մի շարք **մեթոդների** համադրական կիրառմամբ: Դրանցից են իմաստային և գործաբանական վերլուծական մեթոդներն ու մոտեցումները, որոնք հնարավոր են դարձրել երկխոսության դիտարկումը արտակա և ներակա կառույցների իմաստային փոխկապակցման շրջանակներում: Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կանխամտածված ներիմաստի արտահայտման հիմքում ընկած են խոսակիցների անձնական հարաբերությունների գործոնները, որոնց ձևավորման համար անհրաժեշտ են նախահիմքեր, աշխատանքում այդ հարաբերությունների ներկայացման համար կիրառվել է նաև համատեքստային-նկարագրական մեթոդը:

Աշխատանքի *մեթոդաբանական հիմքը* ժամանակակից լեզվաբանության մեջ դիսկուրսի վերլուծությանը և մասնավորապես երկխոսության դիտարկմանը նվիրված աշխատություններն են¹, որոնք ներառում են խոսքի իմաստին առնչվող տեսական մոտեցումներ:

Աշխատանքի *գիտական նորույթը* կանխամտածված ներիմաստի արտահայտման պատճառների և ոչ կանխամտածված ներիմաստի առաջացման նախադրյալների լուսաբանումն ու հիմնավորումն է և դրանց ընկալման և մեկնաբանության համար անհրաժեշտ նախապայմանների՝ լեզվական և արտալեզվական միջոցների տարբերակումը: Առաջին անգամ փորձ է արվում անավարտ, զեղչված և երկիմաստ կառույցները դիտարկել կանխամտածվածության և ոչ կանխամտածվածության շրջանակներում՝ ելակետային դրույթ համարելով խոսքում դրանց գործածման պատճառներն ու նպատակները:

Աշխատանքի *տեսական նշանակությունն* այն է, որ ներիմաստի դրսևորումը դիտվում է որպես մի կողմից լեզվին, մյուս կողմից՝ խոսքին բնորոշ երևույթ: Այս մոտեցումը թույլ է տալիս հստակեցնել դրա սահմանները լեզվում և խոսքում: Ուսումնասիրության արդյունքները կարող են որոշակի ներդրում ունենալ լեզվաբանության մեջ դիսկուրսի և մասնավորապես երկխոսության վերլուծություններում, քանի որ արծարծում են երկխոսության բացահայտ և ոչ բացահայտ կողմերն ընդգրկող խնդիրներ՝ ներակա և արտակա իմաստների փոխկապակցվածության շնորհիվ երկխոսությունը միաժամանակ դիտարկելով և՛ գործաբանության, և՛ իմաստաբանության շրջանակներում:

Աշխատանքի *գործնական արժեքն* այն է, որ հետազոտության արդյունքները կարող են կիրառվել միջանձնյա հարաբերությունների հաստատման գործընթացում՝ որպես խոսքային մարտավարության հաջողման չափորոշիչներ՝ նպաստելով առավել հղկված և կշռադատված խոսքարտաբերմանը: Ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել նաև անզլերենի դասավանդման տեսական և գործնական դասընթացներում, գործաբանության, իմաստաբանության, դիսկուր-

¹ Brown G., Yule G. Discourse Analysis. Cambridge: Cambridge University Press. 1983; Ochs E., Schieffelin B.B. Acquiring Conversational Competence. USA: Routledge & Kegan Paul, 1983; Ostman J.O.I. Pragmatics as Implicitness: an Analysis of Question Particles in Solf Swedish, with Implications for the Study of Passive Clauses and the Language of Persuasion. University of California, Berkeley, 1986; Verschueren J., Ostman J.O. Key Notions for Pragmatics. USA: John Benjamins Publishing, 2009; Kneel S. A Deflationist Theory of Intentionality // Stekeler-Weithofer P. (ed.) The Pragmatics of Making it Explicit. USA: John Benjamins Publishing, 2008; Blakemore D. Relevance and Linguistic Meaning: The Semantics and Pragmatics of Discourse Markers. Cambridge: Cambridge University Press, 2002, etc.

սի և մասնավորապես երկխոսության վերլուծության խնդիրներին առնչվող դաս-
ընթացներում և համապատասխան ուսումնամեթոդական ձեռնարկներում:

Հետազոտության **փաստական նյութը** ժամանակակից բրիտանական և ամե-
րիկյան գեղարվեստական գրականությունից ընտրված երկխոսական միավորներ
են (շուրջ 1200), որոնց ընտրությունը պայմանավորված է խոսողի/ խոսակցի խոս-
քում կանխամտածված և ոչ կանխամտածված ներիմաստների առկայությամբ:

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է քննարկվող նյութի
պահանջներով: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից,
եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացվում են աշխատանքի թեման, արդիակա-
նությունը, նորույթը, ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, ինչպես նաև
տեսական ու գործնական արժեքն ու մեթոդաբանական ուղղվածությունը:

Առաջին գլուխը («Երկխոսությունը որպես ներիմաստակիր հաղորդակցու-
թյուն») բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլուխը («Երկխոսությու-
նը որպես նպատակային հաղորդակցական միավոր») ուսումնասիրում է խոսքի և
երկխոսության պլանավորման հավանականությունը: Այստեղ երկխոսությունը
դիտարկվում է որպես շղթայական խոսքավոխանակման համակարգ, որտեղ
երկխոսության յուրաքանչյուր մասնակից պլանավորած խոսքարտաբերմամբ
անմիջական մասնակցություն ունի երկխոսության կառուցման և իմաստավոր-
ման հարցում: Հատկանշական է, որ խոսակիցների ցանկացած հաջորդ խոսք
տրամաբանական կապ ունի նախորդի հետ և իր իմաստային դաշտում արտա-
հայտում է նրանց մոտեցումներն ու դիրքորոշումները: Առանցքային է համար-
վում այն դրույթը, որ յուրաքանչյուր հաջորդ խոսք կառուցվում է իրավիճակային
պահանջներից ելնելով, այսինքն հաղորդակցման ընթացքում իրավիճակն է
թելադրում երկխոսության զարգացման ընթացքն ու թեման:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում («Երկխոսության կառավարում. պլա-
նավորում և զարգացում») քննության են առնվում երկխոսության վերլուծության
առանձնահատկությունները, որոնք ենթադրում են բոլոր հնարավոր իմաստների
վերհանում՝ արտակա և ներակա: Խոսքի իմաստի ճշգրիտ ճանաչման տեսա-
կետից երկխոսության վերլուծության առանձնահատկությունն այն է, որ
վերլուծության ընթացքում ոչ թե պարզապես ուսումնասիրվում են լեզվօգտա-
գործման ձևերը, այլ նաև տրամաբանորեն մեկնաբանվում են արտահայտված և
չարտահայտված, սակայն ակնարկված մտքերը:

Երկխոսության վերլուծությունը ենթադրում է երկխոսության զարգացման
ընթացքի ուսումնասիրություն, որը համարվում է երկխոսության կառավարման

գործընթաց²: Իմաստային վերլուծության հիմքում ունենալով խոսքը կառուցելու պահին խոսակիցների սուբյեկտիվ մտածողության խնդիրը՝ կառավարման գործընթացում երկխոսության զարգացման առանցքային նախապայման ենք համարում խոսքային մտադրությունների ճանաչումը: Երկխոսությունը իմաստային վերլուծության ենթարկելիս համապատասխանաբար դիտարկվում է անհատ և խոսքի իմաստ կապը: Երկխոսության դիտարկումը ցույց է տալիս, որ խոսողի դերն ու ակտիվությունը պայմանավորված են նրա խոսքային մտադրության իրագործման հրատապությամբ, ինչն էլ հնարավորություն է տալիս երկխոսության կառավարման գործընթացում տարբերակել ակտիվ և պասիվ մասնակիցներին:

Առաջին գլխի երրորդ ենթագլուխը («Ներակա և արտակա իմաստների փոխկապակցվածությունը երկխոսության մեջ») նվիրված է ներակա և արտակա իմաստների առանձնահատկությունների և ներիմաստի մեկնաբանության դիտարկմանը: Աշխատանքում առանցքային ենք համարում այն դրույթը, որ արտակա կառույցում արտահայտված տեղեկատվությունը սկսվում և ավարտվում է բառային միավորների վիզուալ գործածմամբ, ուստի ոչ տեսանելի, սակայն ընկալելի ցանկացած բառային միավոր համարում ենք ներակայված տեղեկատվություն:

Ինչպես հայտնի է, խոսքով տեղեկություն հաղորդելու, ստանալու կամ խոսքի միջոցով իրականության մեջ որևէ բան փոխելու ցանկությունը արտահայտում է անձի *խոսքային մտադրությունները*, որոնք ընկած են խոսքաստեղծման հիմքում: Դրանք ենթադրում են իմաստներ, որոնք արտացոլվում են և՛ արտակա, և՛ ներակա կառույցներում և ընկալման համար մեկնաբանության կարիք ունեն: Հիմք ընդունելով մեկնաբանության համար Ջ.Բրաունի, Ջ.Յուլի և Թ.Գոնզալեզի³ առաջարկած տարբերակները՝ կարծում ենք, ներիմաստի մեկնաբանությունը կատարվում է երեք մտավոր գործընթացների հիման վրա՝ խոսքի ընկալում (perception), ենթադրություններ (assumptions), եզրահանգում (inference):

Խոսքի ընկալումը լսելու և ըմբռնելու գործընթացն է: Այն հիմնականում սուբյեկտիվ բնույթ է կրում: Ներիմաստի մեկնաբանությունը ներառում է խոսքին առնչվող ենթադրությունների ամբողջական համակարգ: Այսինքն, խոսքի բովանդակությունը հիմք է հանդիսանում ենթադրություններ անելու համար: Ներիմաս-

²Bunt H. Context Representation for Dialogue Management // Bouquet P., Serafini L., Brezillon P., Beneceretti M., Castellani F. (eds.) Lecture Notes in Artificial Intelligence. Vol. 1668. Berlin: Springer, 1999, p. 78.

³Brown G., Yule G. Discourse Analysis. Cambridge: Cambridge University Press. 1983; Gonzalez T. Implicitness and Ideology // Rothwell A.D., Guijarro A.J.M., Hernandez J.I.A. (eds.) Talk and Text: Studies on Spoken and Written Discourse. Spain: Univ de Castilla La Mancha, 2000.

տի մեկնաբանության ժամանակ ենթադրություններին հաջորդում է եզրահանգման փուլը, որտեղ խոսակիցը ենթադրելի տարբերակներից ընտրում է վերջնական տարբերակը, որով հավելում է արտակա կառույցը:

Աշխատանքի երկրորդ գլուխը («Ներիմաստի տեսակները և դրանց արտահայտման առանձնահատկությունները երկխոսության մեջ») բաղկացած է չորս ենթագլուխներից: Առաջին ենթագլուխը («Ներիմաստի տեսակների միտումնավոր և ոչ միտումնավոր արտահայտումը երկխոսության մեջ») անդրադառնում է այնպիսի ներակա իմաստներին, որոնք պայմանավորված են բառի՝ վերաբերյալի հատկանիշներով կամ լեզվական կանոններով, և նրանց, որոնք որևէ առնչություն չունեն վերջիններիս հետ և իրենց տեսակով հաղորդակցման հետևանք են: Հետևաբար, այն միավորները, որոնք ներիմաստ չեն արտահայտում պայմանականությունների միջոցով, հաղորդակցման ընթացքում են դառնում ներիմաստակիր:

Հիմնվելով ներիմաստի արտահայտման առանձնահատկությունների վրա՝ որոշ լեզվաբաններ առանձնացնում են ներիմաստի երեք տեսակներ՝ կանխենթադրույթներ, կանխավարկածներ, ներակայույթներ⁴:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում («Կանխենթադրույթը որպես լեզվական միավորներով պայմանավորված ներիմաստ») քննության է առնվում կանխենթադրույթն ու դրա տեսակները: Կանխենթադրույթի դիտարկումը մեզ հանգեցնում է այն եզրահանգման, որ այն հենքային գիտելիք է, որը խոսողը և խոսակիցն ունեն միմյանց, այլոց և շրջակա իրականության վերաբերյալ: Կանխենթադրույթի հիմնական առանձնահատկությունը ժխտման ժամանակ հաստատականության պահպանումն է: Այսինքն, անկախ այն հանգամանքից ասույթը հաստատում է արտահայտում, թե՛ ժխտում, նրանում առկա հաղորդագրությունը մնում է հաստատուն: Ուսումնասիրելով կանխենթադրույթը՝ կարծում ենք, Ջ.Յուլի⁵ առաջարկած կանխենթադրույթի վեց տեսակներին (գոյաբանական, փաստարկային, ոչ փաստարկային, բառաշարային, կառուցվածքային, հակափաստարկային) կարելի է ավելացնել ևս երեք տեսակներ: Առաջին խմբում, որն անվանել ենք *կրկնոր-*

⁴ Grice P.H. *Studies in the Way of Words*. Harvard: Harvard University Press, 1989; Chilton P.A., Schaffner Ch. *Themes and Principles in the Analysis of Political Discourse* // Chilton P.A., Schaffner Ch. (eds.) *Politics as Text and Talk: Analytic Approaches to Political Discourse*. USA: John Benjamins Publishing, 2002; Fairclough N. *Analysing Discourse: Textual Analysis for Social Research*. New York: Routledge, 2003; Diessel H. *The Acquisition of Complex Sentences*. Cambridge: Cambridge University Press. 2004; Carston R. *Thoughts and Utterances: the Pragmatics of Explicit Communication*. John Walley & Sons, 2008; Yule G. *The Study of Language*. Cambridge: Cambridge University Press, 2006.

⁵ Yule G. *Pragmatics*. Oxford: Oxford University Press, 1996.

դային կանխենթադրույթներ, կարելի է ներառել կրկնակի գործողություն ցույց տվող բառեր/արտահայտություններ՝ too, again, always, seldom, often, once more, as usual, etc., տարբերակում ցույց տվող բառեր՝ another, the other, this one, that one, etc., և այնպիսի կառույցներ, որոնցում առկա են համեմատություն կամ նմանություն ցույց տվող լեզվական միավորներ՝ like, alike, as, as...as, not so...as, etc.:

A. Would you like *another* cigarette.

B. No, thank you. (Clavell, 94)

Մեկ այլ ծխախոտի առաջարկը վկայում է այն մասին, որ տվյալ երկխոսական իրավիճակում առաջին անգամ չէ, որ խոսակցին ծխախոտ է տրվել: Հետևաբար, առկա է հետևյալ ներիմաստը՝ Speaker A or other person has already given one or more cigarettes to Speaker B:

Երկրորդ խմբում, որն անվանել ենք *հականշային կանխենթադրույթներ*, կարելի է դասել այնպիսի լեզվական միավորներով պայմանավորված կանխենթադրույթները, որոնք հաստատական նախադասություններում ընկալելի են դառնում հականիշ լինելու շնորհիվ և ցույց են տալիս փաստացի իրողություններ:

A. We'll give them a few minutes, then get out of this bloody place.

B. At least let's *open the door*. (Clavell, 197)

Ցանկացած այնպիսի կառույցում, որտեղ «բացել»՝ open բառը կիրառվում է իր ուղղակի իմաստով, ցույց է տալիս, որ այն խնդիրը, որին տվյալ կառույցում բնորոշ է բացվելու հատկությունը, գտնվում է փակ վիճակում և արտահայտում է հետևյալ ներիմաստը՝ The door is closed:

Կանխենթադրույթների շարքին կարելի է դասել նաև ցանկությունների, մաղթանքների, խորհուրդների և առաջարկների արտահայտումները, որոնք զուգակցվում են անիրական լինելու փաստը շեշտող բառերով՝ to wish, to want, to advise, to recommend, to suggest, to offer, had better, etc., ինչպես նաև խոսակիցների ակնկալիքները կամ նրանցից ակնկալվող քայլերը ցույց տվող միավորներով՝ to expect, to look forward, to hope, to be eager, to be going, etc.: Կանխենթադրույթների այս տեսակն անվանել ենք *մտացածին/երևակայական կանխենթադրույթներ*:

A. I *wish* he'd get here if he's coming.

B. I *wish* we knew what the hell happened with Cheng San. (Clavell, 259)

Վերոնշյալ օրինակում խոսողը և խոսակիցը արտահայտում են իրենց ցանկությունը, որը խոսողի դեպքում նաև մաղթանք է եկվորի համար: Սակայն *wish* բառն արդեն իսկ հուշում է, որ այն անձը, ում մասին խոսվում է, նրանց հետ չէ:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում («Կանխավարկածը որպես վերանվանական առանձնահատկություններով պայմանավորված ներիմաստ») անդրադառնում ենք բառի վերանվանական հատկանիշներով պայմանավորված ներիմաստ-

ներին՝ կանխավարկածներին: Կանխավարկածի հարաբերությունը ամրագրված է լեզվի կառուցվածքում: Այն վերագրվում է նախադասությունների միջև այնպիսի պայմանականություններին, երբ երկրորդ նախադասության ճշմարտացիությունը բխում է առաջինից և ինքնըստինքյան ընկալվում է որպես «դասակարգում»:

A. If fifteen *cows* are browsing on a hillside, how many of them eats with their heads pointed the same direction?

B. The whole fifteen. (Twain, 78)

Վերոնշյալ օրինակում *fifteen cows* are browsing արտահայտությունը ենթադրում է, որ տասնհինգ կենդանիներ են արածում՝ *fifteen animals* are browsing, ուստի առաջին նախադասության ժխտման դեպքում ինքնաբերաբար ժխտվում է նաև երկրորդը՝ *If fifteen cows aren't browsing, fifteen animals aren't browsing either*:

Հարկ է նշել, որ վերանունությունը համարվում է կանխավարկածի հիմնական չափորոշիչը: Յուրաքանչյուր բառի վերաբերյալ անձի առաջին պատկերացումները առնչվում են համապատասխան բառաշարում այդ բառի տարբերակիչ առանձնահատկություններին, որոնց շնորհիվ լեզվական միավորներն իրենց ուրույն տեղն ունեն տեսակային խմբում: Ուստի, կարելի է ասել, որ վերանվանական բնութագրիչներն ամրագրված են յուրաքանչյուրիս գիտակցության մեջ:

Երկրորդ գլխի չորրորդ ենթագլուխը («Ներակայությո՞ր որպես համատեքստով պայմանավորված ներիմաստ») նվիրված է համատեքստում արտահայտվող ներիմաստի՝ ներակայության լուսաբանմանը, որն առաջարկվել է հայտնի լեզվաբան Հ.Պ. Գրայսի կողմից⁶: Նա ներակայությո՞ր սահմանել է որպես իմաստի այնպիսի արտահայտում, երբ ասելով մի բան, իրականում մեկ այլ բան է նկատառվում: Եթե արտաբերված խոսքը հաղորդում է իր բառացի նշանակությունից դուրս լրացուցիչ իմաստ՝ ներիմաստ, այն կոչվում է ներակայությո՞: Ներակայության հիմնական առանձնահատկությունն այն է, որ այստեղ գործ ունենք ամբողջական նախադասության արտակա և ներակա իմաստների համատեքստային կապակցվածության հետ:

A. What had happened three days ago?

B. *Don't let anyone else touch that coffee.* Do you understand? ...Fekesh has drugged Security's coffee... (Niven & Barnes, 326)

Տվյալ օրինակում խոսակցի պատասխանը խոսողի համար միանգամայն հասկանալի է, քանի որ երկխոսության մասնակիցներն ունեն ընդհանուր գիտե-

⁶ Grice P.H. *Studies in the Way of Words*. Harvard: Harvard University Press, 1989, 1991; Grice H.P. *Utterer's Meaning and Intentions* // *Philosophical Review*. New York: Academic Press, 1969.

լիքներ, որոնց վրա հիմնվելով հասկանում են համատեքստի շրջանակներում արտահայտվող իմաստները: Եթե տրվող պատասխանը դիտարկենք երկխոսությունից դուրս, այն տարբեր մեկնաբանություններ կունենա՝ *That coffee belongs to Speaker B, It belongs to another person, Speaker B doesn't want anyone to drink it, etc.:*

Աշխատանքի երրորդ գլուխը («Ներիմաստի արտահայտման եղանակները անզերեն երկխոսության մեջ») բաղկացած է հինգ ենթագլուխներից: Առաջին ենթագլուխը («Կանխամտածված և ոչ կանխամտածված ներիմաստների արտահայտման առանձնահատկությունները երկխոսության մեջ») անդրադառնում է երկխոսության մեջ ներիմաստի արտահայտման երկու հիմնական եղանակների՝ կանխամտածված և ոչ կանխամտածված ներիմաստների տարբերակմանը: Մի կողմից ներիմաստը պարզապես «առաջանում է» խոսքում, մյուս կողմից՝ արտահայտվում է միտումնավոր՝ խոսքին հաղորդելով ենթատեքստ, որի ընկալմամբ էլ պայմանավորված է իրական իմաստի ճանաչումը:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում («Ոչ կանխամտածված ներիմաստի առաջացման նախադրյալներն ու լեզվակառուցվածքային առանձնահատկությունները») դիտարկվում են ոչ կանխամտածված ներիմաստի առաջացման նախադրյալները: Աշխատանքում ոչ կանխամտածված ներիմաստը փորձել ենք սահմանել հետևյալ կերպ. «*Եթե արտակա կառույցում արտահայտված իմաստը համընկնում է խոսքային մտադրության հետ, խոսքում ներակայված իմաստը համարվում է ոչ կանխամտածված ներիմաստ*»: Կարելի է ասել, այն խոսքային մտադրության ուղղակի միջոցներով խոսքայնացման հավելյալ իմաստն է:

Մեր կատարած դիտարկումների արդյունքում եկել ենք այն եզրակացության, որ ոչ կանխամտածված ներիմաստն ունի իր առաջացման նախադրյալները: Դրանցից մեկը երկխոսության մասնակիցների *համընդհանուր գիտելիքներն* են:

A. You are the *Security Chief*?

B. *Alex Griffin. And this is Thadeus Harmony, Deputy Director of Operations for Cowles Industries. He used to be my boss.* (Niven & Barnes, 14)

Տվյալ օրինակում Ալեքսը ներկայանալիս պարզապես տեղեկատվություն է հաղորդում և հավանաբար չի էլ մտածում, որ իր խոսքից տարաբնույթ ենթադրություններ կարելի է անել: Նա կարևոր չի համարում շեշտել իր կամ դեկավարի սեռը կամ նշել, որ քաղաքի կամ ինչ բնույթի արտադրական հաստատությունում է զբաղեցնում հիշատակված պաշտոնը, ինչ կրթություն է ստացել դրա համար և այլն: Դա նրա փոխարեն «անում է» աշխարհի, երևույթների, շրջակա իրականության և միմյանց մասին իր և խոսակիցների տեղեկացվածությունը:

Կարծում ենք, որ ոչ կանխամտածված ներիմաստի առաջացման նախադրյալ կարող է հանդիսանալ նաև *հաղորդման ոչ ենթակա՝ ավելորդ կամ երկրորդական տեղեկատվությունը*:

A. Would you have married her?

B. *I suppose so.* (Niven & Barnes, 168)

Տվյալ օրինակում «*ենթադրում եմ*»՝ I suppose արտահայտությունն իր մեջ ներակայում է նախորդ՝ ... have married her կառույցի իմաստը: Ուստի երկխոսության ընթացքում անհրաժեշտություն չկար ինքնըստինքյան հասկացվող տեղեկատվությունն ավելորդ անգամ կրկնելու:

Ոչ կանխամտածված ներիմաստի առաջացման նախադրյալ է նաև *խոսքային անհեռատեսությունը*, երբ խոսողը «հասկանալով» ինքն ինչ նկատի ունի, ընկալվելու տեսանկյունից խոսքը ոչ լիարժեք է կառուցում:

A. Who said that? Who told you?

B. These police officers. I got a picture while *they were talking.*

A. They aren't police at all. (Ives, 4)

They were talking հատվածը խոսակցի ընկալման տեսանկյունից իմաստային առումով չի կարող լիարժեք լինել, քանի որ կառույցի շարունակության բացակայության պատճառով չի հասկացվում, թե ում հետ են ուստիկանները խոսում՝ միմյանց, թե այլ անձի (անձանց):

Ոչ կանխամտածված ներիմաստի առաջացման մեկ այլ նախադրյալ է լեզվական միավորների *վերանվանական հարաբերությունները*:

A. *It was your soup.*

B. I think there was more than enough. (Niven & Barnes, 168)

Եթե ասույթում ընտրենք օրինակ «*ապուր*»՝ soup բառը, կտեսնենք, որ դրա վերանվանական բոլոր հատկանիշները՝ սնունդ, բուսական կամ կենդանական մթերքներով և այլն, ամրագրված են յուրաքանչյուրիս գիտակցության մեջ և ընկալվում են ինքնաբերաբար:

Երրորդ գլխի երրորդ ենթազվածում («Ձեղչված կառույցները որպես ոչ կանխամտածված ներիմաստի կրողներ») դիտարկվում են զեղչված նախադասություններում ներակայված այն իմաստները, որոնք պայմանավորված են տվյալ ասույթի կառուցվածքային առանձնահատկություններով և դիտավորություն չեն պարունակում: Այս դեպքում թեև խոսքը գիտակցաբար է զեղչվում, դրա հետևանքով նախադասության իմաստը չի փոխվում, քանի որ արտակա կառույցներում արտահայտված իմաստը համընկնում է խոսքն արտաբերողի խոսքային մտադրության հետ: Այս հանգամանքը թույլ է տալիս գալ այն

եզրահանգման, որ գեղչված խոսքում ներակայված իմաստը ոչ կանխամտածված ներիմաստ է: Հարկ է նշել, որ սա այն բացառիկ դեպքն է, երբ ներիմաստի մեկնաբանության համար ոչ թե ենթադրելի վարկածներ են առաջարկվում, այլ հարակից բառերից ու կառույցներից գրեթե ճշգրտորեն վերականգնվում է այն ամբողջական կառույցը, որի շրջանակներում կատարվել է գեղչումը: Օրինակ՝

A. *Anybody want to learn?* (*Does anybody want to learn?*)

B. *Me.* (*I want to learn*)

A. All right, you'll learn.

B. *Here in school?* (*Will/should/must I learn here in school?*)

A. *Certainly.* (*You will/should/must certainly learn here in school*) (Specht, 87)

Ինչպես տեսնում ենք օրինակում, գեղչված անդամները հեշտությամբ վերականգնվում են քերականության իմացության կամ նախորդ կառույցների շնորհիվ: Կարելի է ասել, որ վերակառուցումը այլընտրանք չունի:

Երրորդ գլխի չորրորդ ենթագլխում («Երկիմաստ կառույցները որպես ոչ կանխամտածված ներիմաստի կրողներ») քննության են առնվում բառային և կառուցվածքային բազմանշանակությամբ պայմանավորված երկիմաստ կառույցները: Եթե բառային երկիմաստությունը վերագրվում է կառույցում կոնկրետ բառի արտահայտած երկակի իմաստին, որը, սակայն չի վերաբերում համանունությանը, կառուցվածքային երկիմաստությունը վերագրվում է այնպիսի արտակա կառույցներին, որոնք իրենց քերականական կառույցների շարադասության շնորհիվ երկու իմաստներ են արտահայտում: Օրինակ՝ դերբայական դարձված պարունակող որոշ ստորադասական կառույցներում դժվար է տարբերակել ստորադաս նախադասության գործողությունը ենթակային է վերագրվում, թե՛ խնդրին:

A. *I left him climbing to the window.* There is no one here to see. You may kiss your hand towards the highest shelving roof.

B. I do so father, and I send him my soul with it. (Dickens, 276)

Վերոնշյալ օրինակը կարելի է ընկալել հետևյալ իմաստներով՝ *I left him when he was climbing to the window* և *I left him and climbed to the window*:

Երրորդ գլխի հինգերորդ ենթագլխում («Անավարտ նախադասությունները որպես ոչ կանխամտածված ներիմաստի կրողներ») դիտարկվում է անավարտ նախադասությունը՝ որպես բառային և իմաստային բացթողման պատճառով ներիմաստ պարունակող կառույց: Հատկանշական է, որ անավարտ կառույցների ներիմաստները ճշգրտորեն վերականգնել հնարավոր չէ: Դրանք մեկնաբանվում են համատեքստի և ճշտումների միջոցով ենթադրությունների տեսքով: Ուսումնասիրելով փաստական նյութը՝ եկել ենք այն եզրակացության, որ ոչ կանխա-

մտածված ներիմաստի դիտարկման շրջանակներում անավարտ նախադասությունների շարքում կարելի է դասել անավարտության հետևյալ դրսևորումները՝

1. Երկխոսության *խոսող մասնակցի* կողմից որոշակի լեզվական (անակնկալ տեղեկատվություն, հարց և այլն) կամ արտալեզվական գործոնների պատճառով (ձայներ, հույզեր և այլն) կիսատ արտաբերված նախադասությունները:

2. *Խոսակցի կամ այլ անձի կողմից* որոշակի պատճառներով՝ երկխոսության գործընթացն արագացնելու, խոսողի խոսքի նկատմամբ անտարբերության և այլն, ընդհատված նախադասությունները:

3. *Ամբողջությամբ արտաբերված կառույցները*, որոնց լիարժեք ընկալման համար անհրաժեշտ է խոսքը լրացնել որոշ միավորներով: Այսպիսի կառույցները երկակի դրսևորում ունեն: Մի դեպքում անավարտության «կրողներ են» անցողական բայերը, որոնք կարող են գործածվել և՛ ուղիղ խնդրի առկայությամբ, և՛ առանց դրա⁷, սակայն վերջինիս դեպքում խոսակցին հավելյալ տեղեկատվություն է անհրաժեշտ խոսողի միտքն ընկալելու համար: Մյուս կողմից անավարտ կարելի է համարել այն նախադասությունը, որը չունի անցողական բայ, քերականորեն ավարտուն է, սակայն խոսակցի համար խոսողի մտադրությունը ընկալելի չէ:

A. What happens in the wild?

B. *In the wild?*

A. When they breed in the wild. When they make a nest. (Crichton, 108)

Տվյալ օրինակում խոսակիցը չի ընկալում, թե խոսողն ինչ նկատի ունի *What happens in the wild?* նախադասությամբ: Ուստի հարցի միջոցով փորձում է ճշտել խոսողի խոսքի իմաստը՝ հարցական շարադրմամբ կրկնելով նրա խոսքի՝ իր համար անհասկանալի հատվածը:

Աշխատանքի չորրորդ գլուխը («Կանխամտածված ներիմաստի դրսևորումը անգլերեն երկխոսության մեջ») բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլուխը («Կանխամտածված ներիմաստի արտահայտման պատճառներն ու ընկալման միջոցները») անդրադառնում է իմաստների՝ ոչ բացահայտ միջոցներով պլանավորված արտահայտմանը: Աշխատանքում կանխամտածված ներիմաստը փորձել ենք սահմանել հետևյալ կերպ. «*Եթե ներակա կառույցում արտահայտված իմաստը համընկնում է խոսքային մտադրության հետ, խոսքում ներակայված իմաստը համարվում է կանխամտածված ներիմաստ*»: Հատկանշական է, որ խոսքի գլխավոր իմաստը ներիմաստն է, իսկ արտակա կառույցը պարզապես կաղապար է: Կանխամտածված ներիմաստի հիմնական

⁷ Edisteo B.B. English Communication Arts (Part I). Philippines: Katha Publishing Co., 2005, p. 2.

առանձնահատկությունը սուբյեկտիվ մտադրությունների և դիտավորությունների առկայությունն է:

Կանխամտածված ներքիմաստի արտահայտումն ունի իր պատճառները: Կարծում ենք, կանխամտածված ներքիմաստի արտահայտմամբ *անուղղակիորեն տեղեկատվություն հաղորդելու* պատճառներն են՝

✓ *Քաղաքավարությունը*, որն արտահայտվում է հետևյալ նպատակներով՝

1) խուսափել ուղղակիորեն ասվելիք այն արտահայտություններից, որոնք կարող են վիրավորել, նեղացնել խոսակցին, համարվել անհարգի և այլն, 2) խուսափել այնպիսի բառերի/արտահայտությունների գործածումից, որոնց մասին ընդունված չէ բարձրաձայնել կամ որոնք կարող են դուր չգալ խոսակցին, 3) խուսափել խոսակցի մտերիմների հետ կապված ավելորդ արտահայտություններից.

A. *She doesn't like that. Doesn't like to be held away from body contact, Dr. Grant. If you please.*

B. I'm not hurting her.

A. *Dr. Grand these creatures aren't of our world. They come from a time when there were no human beings around to prod and poke them.* (Crichton, 110)

Վերոնշյալ երկխոսությունը երկու կենսաբանների զրույցից մի հատված է, որտեղ խոսողը չի ցանկանում նեղացնել խոսակցին: Նա ներկայացնում է հատուկ պայմաններում պահվող դինոզավրերին, որոնց ապրելու հավանականությունը շատ քիչ է: Խոսակցին անզգուշորեն ուսումնասիրում է ձագուկին, ինչն էլ ստիպում է խոսողին, քաղաքավարությունից ելնելով, ոչ բացահայտ նկատողություն անել՝ խոսակցային ներակայության միջոցով խոսքին կանխամտածված հաղորդելով ներքիմաստ՝ *Don't touch her, it is forbidden, you will hurt her, she will die, etc.:*

✓ *Անքաղաքավարությունը*, որի նպատակն է առանց վիրավորական արտահայտությունների խոսակցին հասկացնել ասելիքը, այնուամենայնիվ՝ ծաղրի, հեզմանքի միջոցով խոսքում արտահայտելով որոշակի կոպտություն.

A. I am sure Lady Russell would like him. He's just Lady Russell's sort. Give him a book and he will read all day long.

B. Yes, that he will. *He will sit poring over his book, and not know when a person speaks to him, or when one drops one's scissors or anything that happens...* Do you think Lady Russell would like that? (Austen, 126)

Տվյալ երկխոսությունը հատված է մի քանի ընկերների խոսակցությունից, որոնք խոսում էին իր վարքով տարբերվող մի երիտասարդի մասին: Խոսողը փորձում է դրական ներկայացնել երիտասարդին՝ նշելով նրա ձգտումները: Խոսակցիցը նույնպես խոսում է երիտասարդի՝ ուսման նկատմամբ սիրո մասին, սա-

կայն, անքաղաքավարությունն ցուցաբերելով, ծաղրական ենթատեքստով նշում է բացասական հատկանիշներ, որոնք ենթադրում են հետևյալ ներիմաստները՝ *He is very dull, even his intelligence doesn't make him an interesting person, etc.:*

✓ *Խոսքային զգուշավորությունը*, որը նպատակ ունի՝ 1) խուսափել իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն կամ սխալ կարծիք հայտնելուց, 2) խուսափել բառացիորեն անվանել այն երևույթը, որը դեռևս անորոշ է կամ հարկավոր է գաղտնի պահել, 3) խոսակցի մոտ հուզական ծայրահեղություններ չառաջացնելու համար անուղղակիորեն հայտնել վատ լուրերը կամ անսպասելի տեղեկատվությունը.

A. Nellie! Where did you get this?

B. What?

A. This picture... It was on the floor by your jacket.

B. Oh! Emile must have...

A. *What lovely girls! They are like De Becque!*

B. What did you say?

A. *Look, Dinah! Look at them! How much fun they seem to have.* (Michener, 133)

Օրինակում խոսողը, չցանկանալով ընկերուհուն միանգամից հայտնել նրա սիրած տղամարդու ամուսնացած լինելու մասին, հուզական ծայրահեղություններ չառաջացնելու համար որոշում է փոքրիկ «ներկայացում» պատրաստել: Նա աղջկա ընկերոջ՝ Դե Բեքի ընտանիքի նկարը թաքցնում է նրա տանը, իսկ հետո «պատահական գտնում»: Նկարում պատկերված երեխաներին նմանեցնելով Դե Բեքին՝ նա ակնարկում է նրա ընտանիք ունենալու մասին, ապա *Look how much fun they seem to have* ասությամբ ներակայում է *His family is very happy* իմաստը:

✓ *Զգացմունքայնությունը*, որը թույլ չի տալիս խոսողին բարձրաձայնել այնպիսի երևույթների մասին, որոնք իր մոտ սաստիկ հույզեր են առաջացնում: Այս դեպքում հուզմունքի պատճառով խոսողը չի ցանկանում ավարտել խոսքը՝ այսպիսով ընդգծելով հույզը և այն արտահայտելով որպես ենթատեքստ:

A. I wonder what's happened?

B. Is Bill married?

A. It is serious, isn't it? I don't know Nellie.

B. *I thought you might...*

A. No, Nellie. (Michener, 56)

Վերոնշյալ օրինակում խոսակիցը փորձում է խոսողից նրա գործընկերոջ մասին որոշ տեղեկություններ ստանալ, սակայն ամոթը թույլ չի տալիս բացա-

հայտ խնդրանքով դիմել նրան, թեև խոսողն ընկալում է ներիմաստը՝ *I thought you might get some information for me, I thought you might ask him*, և մերժում նրան:

Ըստ մեր դիտարկման՝ կանխամտածված ներիմաստի արտահայտմամբ *անուղղակիորեն տեղեկատվություն ձեռք բերելու* պատճառներն են՝

✓ *Տեղեկացված լինելու անհրաժեշտությունը* կամ *հետաքրքրասիրությունը*, որոնք արտահայտվում են *խորամանկությամբ* և նպատակ ունեն՝ 1) ճշտել խոսակցի վերաբերմունքը, տեսակետը, մոտեցումը, կարծիքն ու դիրքորոշումը որևէ անձի, երևույթի կամ եղելության վերաբերյալ, 2) անուղղակի միջոցներով ստանալ խոսողին հետաքրքրող տեղեկատվությունը.

A. *I'm looking so well these days, even my husband said so, and you know what husbands are.*

B. *I have no idea what they are, but you must tell me. What are they? I only know what they become and perhaps what drove them to it.*

A. *Oh, you are clever, wickedly clever. But you must tell me all. How am I, darling?* (Peake, 45)

Վերոնշյալ օրինակը կնոջ և տղամարդու երկխոսություն է, որտեղ խոսողը ամեն կերպ փորձում է գրավել խոսակցին: Ներկայացնելով այլոց կարծիքներն իր մասին, նա խորամանկությամբ փորձում է ճշտել խոսակցի վերաբերմունքն ու կարծիքը: Խոսակցից նկատում է նրա համակրանքն իր նկատմամբ, որից կարելի է ընկալել *Don't you see my beauty?, What do you think of me?* ներիմաստը և փորձում է ճշտել, արդյոք ինքը ճիշտ է հասկացել նրա համակրանքը: Խոսողն իր հերթին ընկալում է խոսակցի խոսքի ներակայումը՝ *Who is your husband for you?, Do you complain or praise him?, etc.*, և իր հաջորդ խոսքում ներակայում է *First you tell me what you think of me and then I'll tell you what I think of him* իմաստը:

Չորրորդ գլխի երկրորդ ենթագլխում («Ենթատեքստը և ակնարկը որպես կանխամտածված ներիմաստի արտահայտման և ընկալման հիմնական միջոցներ») դիտարկվում է ենթատեքստի և ակնարկի կարևորությունը ներիմաստի արտահայտման հարցում: Հայտնի է որ, ենթատեքստը սահմանվում է որպես խոսքի ներակայված, տողատակային, թաքնված իմաստ, որը թեև տեսանելի չէ, սակայն լսելի է: Կարծում ենք, որ թեև խոսքում ենթատեքստը *տոնայնության, ամոզանության* շնորհիվ միայն լսելի է, դեմ առ դեմ խոսքարտաբերման ժամանակ այն ունի նաև «տեսանելիություն»՝ *դիմախաղը, ժեստերը* և այլն: Ենթատեքստի միջոցով խոսողը գիտակցաբար է ներիմաստավորում խոսքը, քանի որ ենթատեքստը խոսքարտաբերման այն բաղադրիչն է, որը կարելի է նաև թաքցնել: Փաստական նյութի քննությունը ցույց է տալիս, որ մի կողմից որոշ հույզեր իրենք են խոսքում

վերածվում ենթատեքստի, մյուս կողմից՝ ենթատեքստ են դառնում դրանց արդյունքում առաջացած հոգեվիճակը, վերաբերմունքը և զգացողությունները: Հիմնվելով այս հետևության վրա՝ աշխատանքում տարբերակել ենք խոսքում կանխամտածված արտահայտվող հույզերն ու դրանց արդյունք հանդիսացող (երկխոսության մեջ հաճախ հանդիպող) ենթատեքստային դրսևորումները՝ ուրախություն – հպարտություն, պարծանք, գոհունակություն; տխրություն – տխրություն, մտահոգություն, խղճահարություն, հուսահատություն, հիասթափություն, վիրավորանք; բարկություն – բարկություն, դժգոհություն, հակասություն; սեր/համակրանք – սեր, հիացմունք, խանդ; ատելություն/հակակրանք – ատելություն, անտարբերություն, ձանձրույթ /տհաճություն; զարմանք – զարմանք, կասկած; վախ – վախ/անհանգստություն, անվստահություն; ամոթ – ամոթ, զղջում, ավստասանք:

Ակնարկը, որպես կանխամտածված ներիմաստի արտահայտման միջոց, կատարվում է խոսակիցների ունեցած ընդհանուր գիտելիքների շուրջ, այսինքն այն անձանց, իրերի, հասկացությունների և երևույթների, որոնք երկուսին էլ հայտնի են: Հարկ է նշել, որ ակնարկը կարող է արտահայտվել նաև արտալեզվական դրսևորմամբ՝ ծիծաղով, դիմախաղով, և այլն:

Չորրորդ գլխի երրորդ ենթագլուխը («Կանխամտածված ներիմաստի արտահայտումը զեղչված և անավարտ նախադասությունների միջոցով») նվիրված է կանխամտածված զեղչման և անավարտության ուսումնասիրությանը: Անավարտ կառույցներում կանխամտածված ներիմաստի արտահայտումը դրսևորվում է խոսողի կողմից նախադասության՝ հատուկ նպատակներով կիսատ արտաբերմամբ: Հետևաբար, այստեղ կանխամտածված ներիմաստի դիտարկումը պահանջում է միայն խոսողի խոսքի ուսումնասիրություն:

A. *Why, Aunty, I don't think, there is ten.*

B. You numskull, didn't you see me count 'im?

A. *I know, but ..., but...*

B. Well, I'll count'm again. (Twain, 325)

Տվյալ օրինակում խոսողը, քաղաքավարությունից ելնելով, սկզբում ակնարկում է սխալ հաշվարկի մասին, հետո ընտրում է անավարտ խոսքի միջոցով ներակայելու տարբերակը: Խոսակիցը, սակայն, կոհառում է խոսքի ենթատեքստը՝ դժգոհությունը, և մոտավորապես հասկանում է հնարավոր ներիմաստը՝ *I know, but you have been mistaken, I know, but some of them may be stolen, etc.*: Այս դեպքում խոսողը *I know* փաստարկային կանխենթադրույթի միջոցով հակադրում է *there is ten* և *count* արտահայտությունները:

Կանխամտածված զեղչումը դրսևորվում է զեղչման ներիմաստի նպատակային արտահայտմամբ: Այս դեպքում զեղչման նպատակը կրկնությունից խուսափելը կամ խոսքը հակիրճ դարձնելը չէ: Ուստի զեղչվում է խոսքի նպատակն ու ասելիքն արտահայտող բառաշարքը:

A. As he has said it, it is probably false. But it may be true.

B. *If it is...*

A. *If it is...?*

B. And if it does come while we live to see it triumph. I hope for her sake Destiny will keep her husband out of France. (Dickens, 186)

Տվյալ օրինակում խոսվում է մի տղամարդու վերադարձի մասին, ում կինը, օգտվելով նրա երկարաժամկետ բացակայությունից, պատրաստվում էր կրկին ամուսնանալ: Խոսակիցը զեղչում է իր կարծիքն արտահայտող բառը, սակայն խոսքի ենթատեքստը՝ մտահոգությունը, թույլ է տալիս ընկալել *If only it is false and he will not return* ներիմաստը: Խոսողը, ընկալելով ներիմաստը, նույն խոսքն այլ ենթատեքստով՝ զարմանքով է արտաբերում՝ ներակայելով հետևյալ իմաստը՝ *Do you really wish he doesn't come?*: Օրինակում առկա կանխամտածված զեղչման երկու դեպքերում էլ ներիմաստի ընկալմանը նպաստում է ենթատեքստը, քանի որ խոսակիցը *I hope* փաստարկային կանխենթադրությամբ հաստատում է խոսողի ընկալած ներիմաստի իսկությունը:

Մեր կատարած դիտարկումների արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ կանխամտածված երկիմաստությունն արտահայտվում է կանխամտածված զեղչման և անավարտության միջոցով: Խոսողն իր խոսքում երկիմաստություն է առաջացնում, որի նպատակն է անհարմար իրավիճակում հայտնվելու դեպքում խոսքն իր օգտին վերակառուցել:

A. What are you doing for dinner tomorrow night?

B. *For...?*

A. Come and eat at my house. Come on. We'll have fun. (Tyler, 181)

Ըստ համատեքստի՝ խոսակցությունը տեղի է ունենում մի օրիորդի և երիտասարդի միջև: Խոսակիցը կանխամտածված զեղչում է խոսքը, որպեսզի հնարավորություն ունենա այն իր օգտին մեկնաբանելու, իսկ խոսքի երկիմաստությունը ներակայում է հետևյալ իմաստները՝ *For what are you asking what I am doing for dinner tomorrow night?* և *For dinner? I want/think of/have decided ... for dinner:*

Այսպիսով, աշխատանքում կանխամտածված և ոչ կանխամտածված ներիմաստների դիտարկման արդյունքները հնարավորություն են ընձեռում նորովի գնահատել լեզվական միավորների բազմաբովանդակ կիրառման

հնարավորությունները, կշռադատել խոսքի իմաստային «իրական արժեքը», ինչպես նաև ի հայտ են բերում մարդու՝ որպես լեզվական մտածողությամբ օժտված էակի տրամաբանական և զգայական հնարավորությունները խոսքը կառուցելիս: Պատահական չէ, որ յուրաքանչյուր անհատ հասարակության մեջ ինտեգրվելու համար մասամբ մասնակցելով «լեզվի ստեղծմանը»՝ անմասն չի մնում նաև խոսքի զարգացման և կատարելագործման գործընթացից:

Եզրակացության մեջ ամփոփվում են աշխատանքի հիմնական արդյունքները.

- Յուրաքանչյուր արտաբերված խոսք լի է ներիմաստներով, իսկ դրանց ընկալումը խոսակիցներից պահանջում է լեզվական հնարավորությունների և կանոնների, ինչպես նաև շրջակա աշխարհի և մարդկային հարաբերությունների ճանաչում: Իմաստային ամբողջականության ձևավորման հարցում սուբյեկտիվ գործոնի առկայությունը կամ բացակայությունը դիտարկվում է որպես կանխամտածված և ոչ կանխամտածված ներիմաստների հիմնական տարբերակիչ առանձնահատկություն:
- Ոչ կանխամտածված ներիմաստը խոսքում առաջանում է խոսողի կամքից անկախ: Այն լեզվին բնորոշ երևույթ է, որը հիմնականում բնութագրվում է խոսողի կողմից իմաստային դիտավորությունների բացակայությամբ: Այն որպես հավելյալ իմաստ լրացնում է արտակայված իմաստները: Խոսքարտաբերման պահին լինելով ճանաչողական մտածողությամբ պայմանավորված ինքնըստիներջան ընկալվող կամ ոչ կարևոր տեղեկատվություն՝ ոչ կանխամտածված ներիմաստը չի փոխում արտակա կառույցում արտահայտված հիմնական իմաստը:
- Ի տարբերություն ոչ կանխամտածված ներիմաստի՝ կանխամտածված ներիմաստը, բնորոշ լինելով խոսքային մակարդակին, ներակայման դաշտում արտահայտում է խոսողի հիմնական խոսքային մտադրությունները: Նմանապես արտահայտվելով արտակա կառույցի ներքո՝ այն իր իմաստային բովանդակությամբ տարբերվում է արտակա կառույցից՝ լեզվական և արտալեզվական միջոցների շնորհիվ կապ ստեղծելով արտակա և ներակա կառույցների միջև:
- Կանխամտածված ներիմաստի դեպքում խոսքում ամփոփված իրական իմաստը «հեռանում է» արտակա կառույցի արտահայտած իմաստից: Այն ընկալելու համար կարևոր դեր ունեն արտալեզվական գործոնները՝ հույզերն ու զգացմունքները, որոնց «խոսքայնացման» տարբերակները՝ ենթատեքստն ու ակնարկը, դիտարկվել են որպես կանխամտածված ներիմաստի արտա-

հայտման և ընկալման միջոցներ: Պայմանավորված լինելով սուբյեկտիվ պատճառներով՝ խոսակիցների հարաբերություններով և միմյանց նկատմամբ ունեցած վերաբերմունքով՝ սուբյեկտիվ պատճառ հանդիսացող «անձի ենթատեքստը», խոսողի կողմից գիտակցաբար արտահայտվելով որպես «խոսքի ենթատեքստ», արտացոլում է նրա հուզական աշխարհն ու հոգեվիճակը՝ նպաստելով խոսքի իրական իմաստի ընկալմանը:

- Լեզվական ձևերն և ոճական հնարները (փոխաբերություն, համեմատություն, կրկնություն, հունանիշ-հականիշ հակադրություն և այլն) այն միջոցներն են, որոնք «լրացնում են» ենթատեքստը և որոնց խոսողը դիմում է խոսքի իմաստն ամբողջացնելու և դրա ընկալմանը նպաստելու համար: Ոճական հնարների և լեզվական ձևերի կիրառման նպատակի ընկալումը հնարավորություն է տալիս խոսակցին հնարավորինս ստույգ վերականգնել ներակայված իմաստները:
- Նպատակ ունենալով խոսքը կառուցել դիտավորությունների ոչ բացահայտ արտահայտմամբ՝ խոսողը ներակայման բառային մակարդակից անցնում է կառուցվածքային մակարդակ: Երկխոսության մեջ ունենալով կիրառության լայն շրջանակ՝ կանխամտածված և ոչ կանխամտածված ներիմաստները միևնույն կառուցվածքային մակարդակում՝ անավարտ, զեղչված և երկիմաստ նախադասություններում տարբեր կերպ են արտահայտվում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ կանխամտածված ներիմաստի դեպքում զեղչված և երկիմաստ կառույցներում ներիմաստը պայմանավորված է կառուցվածքային յուրահատկություններով, իսկ կառույցի անավարտությունը խոսողի դիտավորության արդյունքը չէ: Կանխամտածված ներիմաստի դեպքում պատկերն այլ է: Այստեղ խոսողը ներակայելու համար դիտավորյալ է զեղչում, անավարտ թողնում կամ երկիմաստություն առաջացնում իր խոսքում:
- Անավարտ, զեղչված և երկիմաստ կառույցները «ծառայեցնելով» իր ներակայման նպատակներին՝ խոսողը կանխամտածված չի արտաբերում ասույթի այն հատվածը, որը քողարկում է խոսքի իրական իմաստը: Անավարտ թողնելով, զեղչելով կամ երկիմաստություն առաջացնելով խոսքում՝ խոսողը պատկերացնում է ոչ ցանկալի արձագանքի արժանանալու դեպքում խոսքը վերակառուցելու տարբերակները՝ կառավարելով հաղորդակցման գործընթացը:

Հետազոտության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. Երկխոսության կառավարման հարցի շուրջ // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N 12, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 106-114:
2. Երկհմաստության ներհմաստի դրսևորումը երկխոսության մեջ // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N 13, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 81-89:
3. Ներակայության դրսևորման առանձնահատկությունները երկխոսության մեջ // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N 14, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 112-119:
4. Զեղչված կառույցները որպես ոչ կանխամտածված ներհմաստի կրողներ // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N 15, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 65-74 (համահեղինակ՝ Ե.Լ. Երզնկյան):
5. Կանխամտածված ներհմաստի արտահայտումը զեղչված և անավարտ նախադասություններում // Օտար լեզուները Հայաստանում, N 5, 2013, Երևան, ԿԱԻ հրատ., էջ 19-32 (համահեղինակ՝ Ե.Լ. Երզնկյան):
6. The nature of intentional implicitness in dialogue // IV International scientific conference “21st century challenges in philology and foreign language teaching: from theory to practice”. Yerevan, 20-21 February, 2014 (Abstracts), p. 15-16.

МАНУКЯН НАРИНЕ ГАГИКОВНА

ПРОЯВЛЕНИЕ ИМПЛИЦИТНОСТИ В АНГЛИЙСКОМ ДИАЛОГЕ

**Диссертация на соискание ученой степени
кандидата филологических наук
по специальности 10.02.07 “Германские языки”**

**Защита состоится 23 апреля 2014 г. в 11:00 на заседании
специализированного совета 009 – “Иностранные языки” ВАК РА при
Ереванском государственном университете**

РЕЗЮМЕ

Реферируемая диссертация посвящена исследованию особенностей проявления имплицитности в английском диалоге. Имплицитность как не прямое выражение информации в речи тесно связана с эксплицитной структурой предложения и в полной мере определяет информационное содержание текста. В диалоге имплицитность может проявляться преднамеренно и непреднамеренно, таким образом раскрывая коммуникативное намерение говорящего. Непреднамеренная имплицитность связана как с гипонимией, отражающей системные отношения в лексике, так и с грамматической структурой языка в целом. Преднамеренная имплицитность характеризуется субъективными намерениями говорящего, использующих лингвистические и экстралингвистические способы выражения для реализации своих коммуникативных намерений.

Целью настоящей работы является выявление причин, обуславливающих способы выражения имплицитности в английском диалоге, где важную роль играют межличностные отношения участников диалога и фактор субъективности в речи.

Актуальность работы обусловлена необходимостью исследования категории имплицитности в речи как одного из средств передачи коммуникативных намерений говорящего. Актуальность проблемы

определяется также и тем, что она самым тесным образом связана с такой важной лингвистической проблемой как взаимодействие явных и неявных средств передачи определенной информации, способствующих гармоничному речевому общению.

Новизна исследования определяется тем, что в ней впервые предпринимается попытка обоснования причин выражения имплицитности в речи и выделяются лингвистические и экстралингвистические факторы, способствующие адекватному восприятию смысла высказывания. Новым является также изучение эллиптических, неполных и двусмысленных предложений с точки зрения преднамеренной и непреднамеренной имплицитности.

Теоретическая значимость работы состоит в разработке методологии изучения имплицитности в языке и речи, позволяющей выделить субъективные и объективные факторы коммуникации. Результаты исследования вносят определенный вклад в изучение диалога в рамках прагматики и семантики и могут стимулировать дальнейшие исследования в сфере теории дискурса.

Практическая значимость работы заключается в том, что ее результаты могут найти применение при разработке теоретических курсов и семинаров по прагматике, прагмасемантике и лингвистике текста, при написании курсовых и дипломных работ. Ряд содержащихся в работе наблюдений наряду с фактическим материалом могут быть использованы в учебном процессе в практике преподавания английского языка, а также в соответствующих разделах учебников и учебных пособий по прагмасемантике, диалогическому общению и речевому этикету.

NARINE MANUKYAN

IMPLICITNESS IN DIALOGUE IN ENGLISH

SUMMARY

The research is devoted to the mechanism of implicitness in dialogue understanding. Implicitness is the indirect expression of information in speech. Though it is invisible in surface structures, it is directly connected with the explicit form of the sentence and plays a great role in the overall understanding of the speech. In dialogue implicitness can be expressed intentionally and unintentionally thus revealing the communicative intentions of the speaker. Unintentional implicit meaning is closely connected with hyponymy of words and the grammatical structure of the language. Intentionality is characterized by subjective goals of the speaker which are realized by different linguistic and extralinguistic means.

The immediate objective of the research is the study of the causes accounting for implicitness in dialogue with special reference to the notions of intentionality and unintentionality. We proceed from the assumption that the relations of the interlocutors and the factor of subjectivity of speech play a crucial role in conveying and receiving information.

The relevance of the research consists in the necessity of the study of means of realizing the verbal intentions of the speaker in interpersonal communication and observation of explicit and implicit ways of conveying and receiving information. Depending on interpersonal relations the cooperative perception of the overt and covert sides of speech enables the speakers to generalize the real meaning of the speech.

The novelty of the research is determined by the study of the causes of intentional and unintentional implicitness thus distinguishing the linguistic and extralinguistic means for their perception and interpretation. In the research for the first time an attempt has been made to observe the elliptical, incomplete and ambiguous sentences from the point of view of intentionality and

unintentionality. The study shows that these grammatical structures are double-natured and can be used for expressing both intentional and unintentional implicitness. Special attention is paid to the role of emotions and other extralinguistic factors in expressing intentional implicitness.

The theoretical value of the thesis is the study of implicit meaning as a phenomenon typical of language and speech. This approach makes it possible to clarify its borders in dialogue. From a theoretical point of view the obtained results can be used in discourse and dialogue analyses. The interrelation of explicit and implicit meanings makes it possible to study both the pragmatic and semantic aspects of dialogue.

The practical significance of the research is provided by the fact that the findings of the research can be applied in establishing interpersonal relations in communication. The main findings of the thesis can be used in the design of theoretical courses on semantics and pragmatics, as well as in discourse and dialogue analyses. The results obtained can also be useful in teaching English.

A handwritten signature in black ink, appearing to be 'Almudena', written in a cursive style.

